Ն. Հ. ՔԱՍՈՒՆԻ, Ռուբեն Ա և Ռուբինյան իշխանության հիմնադրությունը. *Պեյրութ, 1972, 93 էջ։*

Վերջերս Բեյրութում լույս տեսավ Երվանդ Քասունու մենագրությունը՝ նվիրված Կիլիկիայում հիմնադրված Ռուբինյանների թագավորության նախահայր Ռուբեն Ա-ին։

Այդ հարցին հայագետներն անդրադարձել են ոչ մասնավորապես, այլ առանձին թեմաների ասնչությամբ։ Երվանդ Քասունու այս աշխատությունը բազմաթիվ արխիվային փաստաթղթերի, հայերեն և օտար լեզուներով առկա գանազան սկզբնաղբյուրների քննություն է, որը կարևոր է հայ ժողովրդի միջնադարի պատմության կնճռոտ հարցերից մեկը լուսաբանելիս։

Ռուբեն Ա-ի մասին թե՛ հայ և թե՛ օտար մատենագիրները տարբեր ու հակասական կարծիքներ են հայտնել։ Խճճված ու իրարամերժ են Ռուբեն Ա-ի կենսագրական տեղեկությունները, չի հստակված նրա կապը հայոց վերջին թագավոր Գագիկ Ի թագրատունու հետ և այլն։

Հայ մատենագիրներից Հեթում պատմիչը և Մխիթար Այրիվանեցին Ռուբենին համարում են «ազգական Գագիկայ», Ներսես Պալիենցը, Վահրամ Ռաբունին, Սամուել Անեցին գրում են. թե Ռուբենը «արենառու Գագկայ էր»։

Մաթևոս Ուռհայեցին և Սմբատ Սպարապետը գրեթե նույնն են հաղորդում. ըստ մեկի՝ Ռուբենը «ի զօրացն Գագկայ էր», ըստ մյուսի՝ «ի շխանացն Դաղիկայ»։ Վարդան Արևելցին վկայում է, որ նա «էր յազատաց Գագկայ»։

Տարբեր կարծիք կա նաև Ռուբեն Ա-ի ծագման վերաբերյալ։ Դավիթ Բաղիշեցին գտնում է, որ Ռուբենը «Սենեքերիմանց» տոհմից էր։ Իսկ Հեթում Բ նրան համարում է «սասունցի»։ Կիրակոս Գանձակեցին Ռուբենին հիշատակում է նրա որդու կապակցությամբ՝ Կոստանդին «որդւոյ թագաւորագինն Ռուբենայ»։

Այս հակասական կարծիքները, անշուշտ, ազդել են հետագա ուսումնասիրողների վրա[1]։

Ն. Ադոնցը ժխտում է Ռուբենի կապը թե՛ Գագիկի և թե՛ ընդհանրապես Բագրատունիների հետ։ Անտեսելով հայ մատենագիրների վկայությունները, Ռուբեն Ա-ին նա շփոթել է Բյուզանդական կայսրության մեջ գործող ինչ-որ «Ռուբէնէսի» հետ։ Գրախոսվող մենագրության հեղինակը գրում է. «Հակառակ Ադոնցի կատարած ընդարձակ ուսումնասիրության, շուտով կարելի կրլլայ նշմարել անոր աշխատասիրության բռնագրօսիկ ընթացքը» (էջ 42)։

Երվանդ Քասունին հանգամանորեն համադրելով գրեթե բոլոր մատենագրական տեղեկությունները, եզրակացնում է, որ Ռուբեն Ա-ի մասին հավաստի տեղեկություն են հայտնում Մաթեոս Ուռհայեցին և Սմբատ Սպարապետը, որոնք «հստակօրեն կարենալ ըսելու թե Ռուբեն կսերէր հայաստանցի ազատներու ընտանիքե մը, և որպես Գագիկ Բ-ի ազատներեն մեկը, իր զինվորական կմնար անոր ծառայութեան մեջ։ Ռուբեն հետևած էր իր տիրոջ, անոր գահագրկումեն ետք այլ Հետագային՝ Կոստանդին, իր հորը օրինակին հետևելով, մտած էր Գագիկի բանակին մեջ» (էջ 45)։

Այդպիսով, մենագրության հեղինակը ժխտում է այն կարծիքը, թե Կոստանդինը եղել է Գագիկ թագավորի զինվորներից մեկը, քանի որ նա այդ ժամանակ ութ տարեկան էր և չէր կարող զինվորական ծառայության մեջ լինել։ Ըստ Ն. Քասունու՝ Գագիկ թագավորը, երբ Անիից գուրս եկավ, Ռուբենը, որպես հավատարիմ իշխաններից մեկը, իր ընտանիքով ուղեկցեց նրան։ Հետագայում Կոստանդինը հոր հետ նվիրվում է զինվորական ծառայության։ Գագիկ թագավորի մահից հետո նրանք գալիս են Կիլիկիա և ամրանում Ամանոս լեռան անառիկ վայրե-

---

[1] *Այսպես, օրինակ, Մ. Չամչյանի կարծիքով՝ Ռուբենը «յազգականութենէ Գագկայ արքային» («Պատմութիւն հայոց», հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 6), իսկ ըստ Ղ. Ալիշանի՝ նա «...մերձաւոր էր Գագկայ» («Սիսուան», Վենետիկ, 1885, էջ 44)։ Եղիա Ս. Քասունին նրան դիտում է Արծրունիների ցեղից սերված, հիմք ունենալով «Գագիկի հետ ազգականական կապը» («Փիլարտոս հայը», էջ 55) և այլն։*

րում, որտեղ «ժամանակի իրավակարգն թելագրված. անոնք ստիպված էին ընդունելու Փիլարտոսի գերիշխանությունը» (էջ 74)։ Իրավացի է ուսումնասիրողը. երբ գրում է, որ «Ռուբեն և Կոստանդին ինքնագլուխ ոչ մեկ գործ կրնային տեսնել այնքան ատեն, որ Փիլարտոս էր մնար կացության տերը» (էջ 74)։ Միքայել Ասորին այդ մասին գրում է. «... և ոմանք ի Կիլիկիա՝ որք կոչին որգիք Ռուբինայ, ի Փիլարտոսէ իշխանացեալ ի տեղիս տեղիս» («Ժամանակագրություն», էջ 406)։

Բարձր գնահատելով Երվանդ Քասունու գրախոսվող մենագրությունը, կցանկանայինք, այնուամենայնիվ, անել մի քանի դիտողություններ։ Հեղինակը օգտվելով զանազան հայագետների աշխատություններից, գրանցից քաղվածքներ բերելով, անտեսել է առկա վրիպումները։

Հայտնի է, որ Ռուբենից շատ առաջ հայ իշխաններ ու թագավորներ իրենց հայկական ժառանգությունը հանձնելով բյուզանդական կայսրությանը, փոխարենը Կիլիկիայում և Կապադովկիայում, որպես սեփականություն, ստացան քաղաքներ, գյուղեր և կալվածքներ։ Այդպիսիներից էին Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունին, Կարսի թագավոր Աբասի որդի Դագիկը և ուրիշներ։ Ահա այս ավատական իշխանություններն էին, որոնք միավորվելով բարենպաստ պայմաններ ստեղծեցին Կիլիկիայում Ռուբինյանների հայոց իշխանության հիմնադրման համար։ Իսկ Ռուբինյանները Կիլիկիայում հանդես եկան որպես այդ նպատակի համար մարտնչող առաջամարտիկներ։

Մենագրությունը կշահեր, եթե ունենար անձնանունների և աշխարհագրական անունների ցանկ։

Այսուհանդերձ՝ Ռուբինյանների և Ռուբեն իշխանին նվիրված Երվանդ Քասունու սույն մենագրությունը լուրջ ներդրում է հայ միջնադարի պատմության այդ կնճռոտ հարցի լուսաբանման գործում։

Ա. Դ. ԴԱՎԹՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր